

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԾՐԱԳԻՐ

„Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա (տարրական կրթություն)» առարկայի

ԺԳ. 00. 02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (հայոց լեզու )  
մասնաժողովի որակավորման քննության

Հաստատված է Սկզբնական կրթության ֆակուլտետի  
2012թ. փետրվարի 23-ի թիվ 4 նիստում

Երևան 2012

## ԲԱՅԱՏՐԱԳԻՐ

Ծրագիրը ներկայացնում է Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա՝ առարկայի այն պարտադիր մակարդակը, որը պիտի ուսումնասիրած և յուրացրած լինի նշված դասընթացից մասնագիտական որակավորման քննություն հանձնող յուրաքանչյուր ոք:

Ծրագրի բովանդակության հիմքում ընկած են՝

- Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա՝ բուհական դասընթացը,
- ՀՀ հանրակրթության պետական կրթակարգը,
- ՀՀ Հայոց լեզու և գրականություն: Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչը և ծրագիրը,
- Աշակերտակենտրոն, անձնակողմնորոշված կրթության սկզբունքները:

Ծրագրի կառուցվածքն ու բովանդակությունը բխում են ինչպես տասներկուամյա հանրակրթական դպրոցի առաջինից չորրորդ դասարաններում իրականացվող կրթադաստիարակչական գործընթացի խնդիրներից, այնպես էլ՝ կրթության նշված օղակում մայրենիի դասավանդման նպատակներից, մանկավարժության և տարրական ուսուցման մեթոդիկաներ մասնագիտացմանը համապատասխան երկաստիճան կրթության բովանդակությունից և նպատակներից:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հայոց լեզվի մեթոդիկան որպես մանկավարժական գիտություն

1.1 Հայոց լեզվի մեթոդիկայի գիտական հիմունքները: Մեթոդիկայի կապը ընդհանուր դիդակտիկայի, հոգեբանության, մանկավարժության, լեզվաբանության, գրականության, անատոմիայի, կենսաբանության հետ:

1.2 Հայոց լեզվի մեթոդիկայի զարգացման հեռանկարները: Դիդակտիկական նորագույն հետազոտությունների արտացոլումը մեթոդիկայում: Հայոց լեզվի մեթոդիկայի պատմական զարգացման հիմնական փուլերը՝ 1830-40-ական թվականները, 50-60-ական, 70-80-ական, 1890-1905 թվականներ, 1905-1920 թվականներ, խորհրդային և արդի ժամանակաշրջաններ: Հայոց լեզվի մեթոդիկայի պատմության համառոտ ակնարկ (Խ. Աբովյանի, Ս. Մանդինյանի, Ա. Բահաթրյանի, Ղ. Աղայանի, Ն. Տեր-Ղևոնդյանի, Թ. Խզմալյանի, Գ. Էդիլյանի, Ա. Ղարիբյանի, Ա. Տեր-Գրիգորյանի, Ս. Գյուլբուդաղյանի, Զ. Գյուլամիրյանի և այլ մեթոդիստների ծառայությունները հայոց լեզվի մեթոդիկայի ամբողջական դասընթացի ստեղծման գործում):

1.3 Հանրակրթության մեթոդիկայի վերաբերյալ կառավարության որոշումները, կրթության զարգացման հեռանկարային ծրագրերը և Պետական կրթական չափորոշիչները: Առաջավոր դպրոցների և ուսուցիչների դերը մեթոդիկայի հետագա զարգացման գործում: Մեթոդիկայի

մեթոդոլոգիական կամ իմացաբանական հիմքը և ուսումնասիրության մեթոդը: Դպրոցի և ողջ կրթական համակարգի աստիճանական զարգացումը և դրա անդրադարձումը մեթոդիկայում:

## 2. Գրաճանաչության մեթոդիկա

2.1 Գրաճանաչության մեթոդիկայի և հայ այբբենաբանագիտության պատմությունից. կայացումը, էությունը, գրաճանաչության ուսուցման ժամանակակից մեթոդները, դրանց կիրառումը արդի այբբենաբաններում: Գրաճանաչության ուսուցման կազմակերպման մեթոդական համակարգը: Գրաճանաչության դասերի տիպերը և կառուցվածքը:

2.2 Վաղ ուսուցման հիմնավորումը, նպատակները և խնդիրները, իրականացման ուղիները: Դպրոց ընդունվող երեխայի հոգեբանամանկավարժական բնութագիրը և նրա ուսումնական գործունեության պատրաստականության մակարդակին ներկայացվող պահանջները:

2.3 Գրաճանաչության կազմակերպման երեք շրջանները, դրանց նպատակներն ու խնդիրները, իրականացման մեթոդական համակարգը: Գրաճանաչության մանկավարժահոգեբանական և լեզվաբանական հիմքերը:

2.4 Անձնական դիտումների վերաբերյալ գրույցի կազմակերպման մեթոդիկան՝ երկխոսություններին մասնակցելու փորձի կուտակման, գործնական ոճի և այլ տիպի՝ խոսքային կարողությունների մշակման նպատակով: Պատմվածքների, հեքիաթների բովանդակությամբ նկարագարողումների, դիապոզիտիվների, դիաֆիլմերի օգտագործման մեթոդիկան խոսք կառուցելիս:

2.5 Բարեկիրթ խոսքի մշակույթի տարրական կարողությունների զարգացման մեթոդիկան: Համագործակցային ունակությունների ձևավորումը որպես արդյունավետ ուսումնական գործունեություն ծավալելու միջոց:

2.6 Գրաճանաչության ուսուցման շրջանի դասերի տարատեսակները, դասի կառուցվածքը: Ուսուցման այդ փուլում աշակերտների պատրաստականության աստիճանի հաշվառումը, դիֆերենցված և ինտեգրացված մոտեցման իրականացումը:

2.7 Խաղային ուսուցումը և զննականությունը որպես վաղ ուսուցմամբ պայմանավորված դժվարությունների հաղթահարման կարևոր գործոններ:

## 3. Բացատրական ընթերցանության մեթոդիկա

3.1 Բացատրական ընթերցանության մեթոդի հիմնական բաղադրամասերը և դրանց իրականացման մեթոդիկան: Կարդալ կարողանալ՝ հասկացության ընդհանուր բնութագիրը. կարդալու կարողության տեխնիկական կողմի ձևավորումը, կարդացածը իմաստավորելու կարողություն և ընթերցողական ինքնուրույնությունը՝ որպես կարդալու ուսուցման գործընթացի բաղադրամաս: Ինքնուրույն ընթերցանության մեթոդիկան: Կարդալու կարողության ձևավորման մանկավարժահոգեբանական և բանասիրական հիմքերը:

3.2 Կարդալու որակական հատկանիշները և դրանց ձևավորման մեթոդիկան: Կարդալու տեսակները որպես հասկանալի կարդալու կարողության ձևավորման միջոցներ:

3.3 Գրականագիտական և ոճաբանական գիտելիքների ուսուցումը, ստեղծագործական և քննադատական մտածողության ձևավորումն ու կարողությունների զարգացումը տարբեր տեսակի բնագրերի ուսումնասիրման գործընթացում:

3.4 Մայրենիի դասերի ուղղությամբ գոյություն ունեցող պրակտիկայի կատարելագործման հնարավոր ուղիները: Մայրենիի դասագրքերը, դրանց ներկայացվող մանկավարժահոգեբանական պահանջները: Գոյություն ունեցող այլընտրական դասագրքերի համեմատական վերլուծությունը: Մայրենիի դասագրքերի պատմությունը:

3.5 Ուսուցման փոխգործուն և համագործակցային մեթոդներ. դրանց կիրառման մեթոդիկան մայրենիի դասագործընթացում:

#### 4. Քերականության մեթոդիկա

4.1 Քերականության մեթոդիկայի պատմությունից: Քերականության ուսուցման դիդակտիկական հիմքերը, հիմնական փուլերը: Քերականության ուսուցման մեթոդներն ու եղանակները:

4.2 Բառի ձևաբանական վերլուծության ուսումնասիրման մեթոդիկան: Լեզվամտածողության զարգացման, լեզվի նկատմամբ հետաքրքրության, ուղղագրական և խոսքային կարողությունների ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքի խնդիրներն ու բովանդակությունը:

4.3 Ձևաբանության տարրական դասընթացի խնդիրները, բովանդակությունը, բաշխումն ըստ դասարանների, ուսուցման մեթոդիկան: Մայրենիի գործող դասագրքերի համեմատական վերլուծությունը մեթոդիկայի պահանջների տեսանկյունից: Ձևաբանական վարժությունների տեսակները և դրանց կիրառման մեթոդիկան: Ձևաբանական նյութի շուրջ տարվող աշխատանքին ներկայացվող ժամանակակից պահանջների իրականացումը տարբեր խոսքի մասերի ուսուցման գործընթացում:

4.4 Շարահյուսական գիտելիքների ուսուցման հիմնական ուղղությունները և մեթոդները տարրական դասարաններում: Բառակապակցությունը, նախադասությունը և բնագիրը որպես շարահյուսական միավորները և դրանց ներկայացումը հայոց լեզվի տարբեր ծրագրերում և դասագրքերում:

4.5 Զննականությունը քերականության դասերին: Աշակերտների ինքնուրույն աշխատանքի և ուսուցման անհատականացման ձևերը քերականության թեմաներն ուսումնասիրելիս:

5. Խոսքային գործունեության կատարելագործում և կապակցված խոսքի (գրավոր և բանավոր) զարգացում

5.1 Մայրենիի դասերի ժամանակ կրտսեր դպրոցականների խոսքային գործունեության կազմակերպման (գրավոր և բանավոր) նպատակներն ու խնդիրները, դրանց մեթոդական հիմքը:

5.2 Հաղորդակցական և խոսքային վարքի պահպանման ուղղությամբ տարվող աշխատանքի բովանդակությունն ու կազմակերպումը, գանազան ծրագրերի, դասագրքերի և ուսումնական նյութերի վերլուծություն կրտսեր դպրոցականների խոսքի զարգացման հնարավորությունների տեսանկյունից:

5.3 Խոսքային կարողությունների ընդհանուր բնութագիրը, որն ապահովում է.

ա/ թեմայի և հիմնական մտքի բացահայտումն ու հասկացումը. նյութի համակարգն ու հաջորդաբար շարադրումը,

բ/ ճշտություն, հստակությունը, արտահայտչականությունը խոսքի մեջ:

գ/ Խոսքի հաղորդակցական և համագործակցային գործառույթը:

5.4 Բանավոր և գրավոր խոսք. բանավոր խոսքի հիմնական բաղադրիչները. բառապաշար, քերականություն, խոսք կառուցելու կարողություն, ուղղախոսություն:

5.5 Գրավոր խոսք. գրավոր խոսքի հիմնական բաղադրիչները. բառապաշար, քերականություն, խոսք կառուցելու կարողություն, ուղղագրություն, կետադրություն և վայելչագրություն:

5.6 Գրավոր աշխատանքի տեսակները, դրանց իրականացման մեթոդիկան:

5.7 Կրտսեր դպրոցականների խոսքային հաղորդակցման վարքի մշակույթի նորմերի մշակման մեթոդիկան (բարեկիրթ խոսքի տարաբնույթ մոդելների կիրառում, խոսակցին դիմելու, սեփական կարծիքը հայտնելու, խոսակիցների սխալը ուղղելու, դիտողություններ անելու կարողությունների և խոսքի մշակույթի ձևավորում. արտահայտիչ բանավոր խոսք, լեզվական միջոցների օգտագործման գործընթացում աշակերտների թույլ տված տիպական սխալները, դրանց դասակարգումը և վերացման ուղղությամբ տարվող աշխատանքի մեթոդիկան):

5.8 Կապակցված խոսքի և խոսքի մշակույթի ձևավորման ուղղությամբ վարժություններ, դրանց տեսակները և հայոց լեզվի դասի ժամանակ օգտագործման հնարները:

5.9 Հայոց լեզվի ուղղագրության հիմնական սկզբունքներն ու ուսուցման մեթոդները: Ձայնավորների և բաղաձայնների ուղղագրությունը: Քերականական ուղղագրության ուսուցումը: Աշակերտների ինքնուրույն աշխատանքը ուղղագրության ուսուցման ընթացքում: Ձևականությունը և ուսումնադիտողական նյութերի օգտագործումը: Ուղղագրական սխալները և դրանց կանխումն ու հաղթահարումը:

5.10 Ուղղագրական կարողության ինքնավերահսկման մշակման յուրահատկությունը: Գործողությունների անհրաժեշտ հաջորդականության հնարների իմացումը՝ որպես այդ կարողության ձևավորման պարտադիր պայման: Ուղղագրական ինքնավերահսկման գործողության հետևողական ուսուցման մեթոդիկան: Տարրական դասարանների մայրենիի

դասագրքերում, դիդակտիկ նյութերում եղած ուղղագրական վարժությունների վերլուծություն:

5.11 Ուղղախոսության տեղը բանավոր խոսքի զարգացման գործում: Հայերենի գրական արտասանության չափանիշները՝ ձայնեղ բաղաձայների շնչեղացում, կրկնակի բաղաձայնների արտասանությունը, որոշյալ հոդի ճիշտ գործածությունը, օժանդակ բայի արտասանության առանձնահատկությունները, շեշտ, հնչերանգ, բարձրություն և ցածրություն, խոսքի տեմպը:

5.12 Կետադրության գործնական ուսուցման ձևերն ու մեթոդները: Կետադրական վարժությունների համակարգը տարրական դասարաններում:

5.13 Վայելչագրության ուսուցման հիմնական պահանջները. տառատեսակների ճիշտ գրություն, տառերի տեղադրություն, համաչափություն, թեքություն և գրատեսակի պահպանում, դրանց իրականացման ձևերը: Հայերենի ձեռագիր տառերի կազմությունն ու խմբավորումը ըստ մասնիկավորման: Վայելչագրության ուսուցման միջոցները:

## 6. Արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներ

6.1 Հայոց լեզվի ուսուցման հետ կապված արտադասարանային աշխատանքները, դրանց կրթադաստիարակչական նշանակությունը, կազմակերպումն ու անցկացումը:

6.2 Արտադպրոցական աշխատանքներ՝ էքսկուրսիաներ դեպի թանգարաններ, գրատներ, ցուցահանդեսներ, այցելություններ տիկնիկային թատրոն. դրանց նշանակությունը և կազմակերպման գործընթացի մանկավարժահոգեբանական առանձնահատկությունները

## ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ., Երկեր, հ1, ԳԱ հրատ., 1968, 572 էջ:
2. Աբեղյան Մ., Մեսրոպ Մաշտոցը և հայ գրի ու գրականության սկիզբը, Մեսրոպ Մաշտոց, հոդվածների ժողովածու, ԳԱ հրատ., - Եր., 1962, 306 էջ:
3. Աբովյան Խ., ԵԼԺ., հ. 5, -Եր., 1950, 518 էջ:
4. Աբրահամյան Ս.Գ., Աշակերտների խոսքի զարգացումը, -Եր., Լույս, 1973, 75 էջ :
5. Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հ 1, -Եր., Հայպետհրատ, 1962, 390 էջ:
6. Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հ 3, -Եր., Հայպետհրատ, 1962, 547 էջ:
7. Աղայան Ղ., Երկերի ժողովածու, հ 4., -Եր., Հայպետհրատ, 1963, 684 էջ:

8. Աստվածատրյան Մ. և ուրիշներ, Ուսումնառությունն ու դասավանդումը կրտսեր դպրոցում, ձեռնարկ ուսուցիչների համար, 'ԱՅԲԵՔՄ', -Եր.: 2001, -320 էջ:
9. Բաղրամյան Ռ. Հ., 'Գրաճանաչության Մեսրոպ Մաշտոցի մեթոդ', -Եր., 'Լույս', 1989, 103 էջ:
10. Գալստյան Ա.Վ., 'Երկխոսությունը ժամանակակից հայերենում', Էդիթ Պրինտ, - Եր., 2003, 124 էջ :
11. Գարի Վ. և ուրիշներ, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ. Մասնագիտական կրթություն և մասնագիտական զարգացում: Ձեռնարկ մանկավարժների և կրթության կազմակերպիչների համար, -Եր.: 'Նոյյան Տապան', 2005, -314 էջ:
12. Գյուլամիրյան Ջ.Հ., 'Վեց տարեկանների ուսուցման առանձնահատկությունները 1-ին դասարանում', -Եր., 'Լույս', 1986, 144 էջ:
13. Գյուլամիրյան Ջ. Խմբային աշխատանքը՝ որպես ուսուցման ստեղծագործական-հետազոտական ուղղվածության ապահովման միջոց. Իրականացման մեթոդիկա: 'Նախաշավիղ', 2001 թիվ 3, էջ 27-32:
14. Գյուլամիրյան Ջ. Հ., Խաղալով սովորենք, -Եր.: 'Զանգակ-97', 2009, - 79 էջ:
15. Գյուլամիրյան Ջ.Հ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, - Եր.: 'Զանգակ-97', 2009, -349 էջ:
16. Գյուլամիրյան Ջ.Հ., Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, -Եր.: 'Լույս', 1998, -125 էջ:
17. Գյուլամիրյան Ջ., 'Զանգակ' այբբենարանի և 'Ես սովորում եմ գրել' աշխատանքային տետրերի մեթոդական ուղեցույց, -Եր.: 'Զանգակ-97', 2003, -178 էջ:
18. Գյուլամիրյան Ջ.Հ., Արտագրությունների, թելադրությունների, փոխադրությունների ժողովածու, -Եր.: 'Զանգակ-97', 2009, -183 էջ:
19. Դավթյան Մ., Ջոհրաբյան Գ. և ուրիշներ 'Կրթադաստիարակչական համալիր ծրագրի ստեղծման և ինտեգրման մոտեցումներ', 'Այրեքս', -Եր.: 2002, -309 էջ:
20. Էդիլյան Գ. Է., Հայոց լեզվի մեթոդիկա, Թիֆլիս, 1923, էջ 95-260:
21. Խարազյան Ռ. Փ., Աշակերտների բառապաշարի հարստացումը տարրական դասարաններում, -Եր.: 'Ասողիկ', 2003, -128 էջ:
22. Կոմենսկի Յան Ամոս, Մեծ Դիդակտիկա, Հայպետուսմանկհրատ, -Եր., 1962,-356էջ:
23. Միրումյան Մ. Վ., Հոմանիշ, հականիշ և համանուն բառերի ուսուցումը որպես խոսքի զարգացման միջոց, -Եր., 'Զանգակ-97', 2005, 127 էջ:
24. Հանրակրթության պետական կրթակարգ, -Եր.: Անտարես, 2004,-72 էջ:

25. Հարությունյան Ն. Կ., Առաքել Բահաթրյան (Կյանքը և գործը), Երևանի Պետական համալսարանի հրատարակություն, -Եր.:1992,-120էջ:
26. Հայոց լեզու, գրականություն: Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր:- Եր., Անտարես, 2006, -148 էջ:
27. Ղարիբյան Ա., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, - Եր.: 1954, -369 էջ:
28. Շավարշյան Ա. Մ., 'Հայ մանկավարժներ', Գիրք Ա, Հայպետուսմանկհրատ, -Եր., 1958, 622 էջ:
29. Շավարշյան Ա. Մ., 'Հայ մանկավարժներ', Գիրք Բ, Հայպետուսմանկհրատ, -Եր., 1961, 782 էջ:
30. Ջինի Լ. Սթիլ, Քուրթիս Ս. Մերեդիթ, Չարլզ Թեմփլ, Քննադատական մտա-ծո-ղության համակարգ ամբողջ ուսումնական ծրագրի համատեքստում, -Եր.:1988,
31. Միմոնյան Յ., 'Հայ մանկավարժության պատմություն' հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, -Եր., Մանկավարժ, 2006, 263 էջ:
32. Սթիլ Ջ. Լ., Մերեդիդ Ք. Ս., Թեմփլ Չ., Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով, (I-VIII դասարաններ), -Եր.: 1998,
33. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Հայոց լեզվի մեթոդիկա, տարրական դասարաններ, - Եր.: Լույս,1980, -564 էջ:
34. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Մանկավարժական դիմանկարներ,գիրք Ա
35. Տեր-Գրիգորյան Ա. Ե., Մանկավարժական դիմանկարներ,գիրք Բ, Էդիթ Պրինտ, -Եր, 2007, 303էջ:
36. Քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ, (Գ. Վարելլայի ընդհանուր խորհրդատվությամբ), -Եր., 'Նոյյան Տապան', 2005, -407 էջ:
37. Бондаревская Е.В., Теория и практика личностноориентированного образования. Изд. Ростовского пед. Унив.,2000, -352с.
38. Венгер А. Л., Цукерман Г. А. Психологические обследование младших школьников, - М., Владос Пресс, 2001,-159с.
39. Волков Б.С. Младший школьник: Как помочь ему учиться. - М.: Академический Проект, 2004. - 142 с.
40. Выгодский Л. С. Психология,- М., 2000г., стр.778-792.
41. Давыдов В.В. Теория развивающего обучения, - М, ИНТОР, 1996,-544 с.
42. Каптерев П. Ф. Дидактические очерки. Теория образования. Изб. соч.,-М., Педагогика, 1982,-350 стр.
43. Лийметс Х. И., Групповая работа на уроке. -М., Знание, 1975, N5, -64 с.



44. Лук А. И., Мышление и творчество. -М., Педагогика, 1976, -144 с.
45. Львов М. Р. Школа творческого мышления.- М., Дидакт, 1993, - 183стр.
46. Львов М.Р. и др. Методика обучения русскому языку в начальных классах. - М.: Просвещение,  
2000, 415 стр.